




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10505

Պ. ԳՐԱՏԻՆԵՎ

150

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԿԱԴՐԵՐԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ЗКМ 4

7-85

ԳՐԱԴԱՐԱՆ

1932

ԹԵՐԵՎԱՆ

24 SEP 2006

09 DEC 2008

3KCM4

7-85 48

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԿԱԴՐԵՐԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ԸՅԿ. ՊՈՍՏԻՇԵՎԻ ճառք Համ. ԼԿՑԵՄ Կենտրոնի 8-րդ
պլենումում, 1931 թ. դեկտ. 9-ին)

2993

ՊԵՏ Զ Բ Ը Տ

ՀԻՄՆԵ

1992

ՅԵՐԵՎԱՆ

10505

23.07.2013

ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԴՐԵՐԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

(Ընկեր ՊՈՍՏԻՇԵՎԻ ճառը ՀամԼԵՑՆԵՄ Կենտկամի 3-րդ պլենումում, 1931 թ. դեկ. 9-ին)

Ընկերներ՝

Ձեր պլենումը հավաքվել է Ծամյակի 3-րդ, վճռա-
կան տարվա վերջում, վորի կարևորագույն արդյունք-
ներից մեկն էլ հանդիսանում է կոմյերիտիության յե-
րեք միլիոնանոց աճումը:

Այդ թիվն ինքն իր մասին է խոսում արդեն. նա
խոսում է կոմսոմոլի գաղափարական, քաղաքական մա-
կարդակի աճման մասին, սոցիալիստական շինարարու-
թյան մեջ կոմսոմոլի դերի հսկայական աճման մասին,
բանվոր դասակարգի և աշխատավոր լայն մասսաների
վրա կոստակցության ազդեցության մեծագույն աճման
մասին:

Այդ նոր լրացումը զգալիորեն լայնացնում է ձեր
աշխատանքի մասշտաբը, մեծացնում է նրա բարդու-
թյունը, ճեղ առաջնորդում է մի շարք նոր պահանջներ:
Այս ետապում ձեր առաջ կանգնած նոր խնդիրների լու-
ծումն անբաժան է սոցիալիզմի համար մղվող ընդհա-
նուր պայքարի խնդիրների լուծումից, ճիշտ այնպես,
ինչպես կոմսոմոլի 3 միլիոնանոց աճումն անբաժան
է սոցիալիզմի այս տարվա համաշխարհային պատմա-
կան հաղթանակներից:

5474-55

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՍՍՈՍՈՒՆ ԱՃՈՒՄԸ

Ծամյակի 3-րդ, տարին յերշանում է: Այդ տա-
րին համաշխարհային պրոլետարիատի պայքարի պատ-
մության մեջ կմանի իբրև ԽՍՀՄ-ում սոցիալիզմի մե-
ծադյուն հաղթանակների տարի և կապիտալիստական
սխտեմի ել ավելի նեխման տարի:

Սոցիալիստական շինարարության նյութական
տեխնիկական բազայի նշանակալից ընդլայնումը,
ԽՍՀՄ-ի ինդուստրիալ հզորության հետադա աճումը,
պրոլետարիատի քաղաքական և գաղափարական-քաղա-
քական մեծագույն աճումը, չքավոր-միջակային տըն-
տեսությունների կոլեկտիվացման ավարտումը հիմնա-
կանում է կուլակության, իբրև դասակարգի, լիկ-
վիդացիան կարևորագույն դյուզատնտեսական չրջան-
ներում, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կա-
սուցումը,—սրանք են այն հիմնական արդյունքները,
վորոնցով մեր յերկրի պրոլետարիատը կուսակցության
դեկավարությամբ թևակոխում է Ծամյակի 4-րդ,
յեղադարձման տարին:

Արդյունաբերական արտադրանքի նոր, ավելի չեշ-
տակի անկում, աղբաբային կրիդիաի հետադա խորա-
ցում, մի շարք կարևորագույն պետություններում
վարկային սխտեմի և վալյուտայի խորտակում, 40
միլ. արդյունաբերական պրոդուկտների ընդգրկումը
գործադրկության մեջ, հեղափոխական վերելքի հետա-
դա աճում—սրանք են այն վճռական փաստերը, վորոնց
առաջ համաշխարհային բուրժուազիան յերազում է
յեղը գտնել, անդուլ ջանքեր անելով դուրս գալու իր
տնտեսական սխտեմի խորունկ ցնցումից:

ԽՍՀՄ-ի հզորության աճումը, կապիտալիստա-
կան սխտեմի հետադա տատանումը, կապիտալիզմի
յերկրներում հեղափոխական շարժումների աճումը—
սրանք են ընթացիկ տարվա վճռական արդյունքները:

ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության և հաւաքիստիային պրոլետարիատի հեղափոխական պայ-
քարի այս հիմնական արդյունքը մի անգամ ևս առում է
մասսաներին այն մասին, վոր միակ գիտական քեորի-
ան յեղել է և մնում է մարքս-լենինյան քեորիան, վոր
պրոլետարիատի միակ իսկական, հեղափոխական կու-
սակցութիւնը յեղել է և մնում է բայշէիկների կու-
սակցութիւնը, վոր միակ միշտ գիծը հանդիսացավ վոչ
քե մեր յերկրում սոցիալիզմ կանոցելու հնարավորու-
թյան քեորիայի հակառակորդների գիծը, վոչ քե կագ-
մակեյովաժ կապիտալիզմի «քեորիայի» կողմնակից-
ների գիծը, այլ կուսակցութեան լենինյան ղեկավարու-
թյան գիծը՝ ընկ. Ստալինի գլխավորութեամբ:

Կոմսոմոլի 3 միլիոնանոց աճումն ընթացիկ տարում
հանդիսանում է սոցիալիզմի հաղթանակի ուղղակի
հետեանքը, այն հաղթանակի, վորը լարված դասա-
կարգային պայքարի պայմաններում ձեռք բերեց ԽՍ-
ՀՄ-ի պրոլետարիատը: Դրա համար ել ինքնատիւրյան
հասկանալի յե, վոր ծիծաղելի և սխալ կլինեի կոմսո-
մոլի այդ 3 միլիոնանոց աճումն ընդունել իբրև անսպա-
ռելի մի բան և խոսել նրա մասին իբրև հաջող անցկաց-
ված կամպանիայի արդյունքի:

Այդ նոր աճումը հանդիսանում է բանվոր դասա-
կարգի և լայն աշխատավոր մասսաների ղեպի կոմկու-
սակցութիւնը և նրա ղեկավարած կոմսոմոլն ունեցած
վստահութեան աճման արտահայտութիւնն ու արդ-
յունքը:

Այդ մասսայական հոսանքը հանդիսանում է անմի-
ջական հետեանքն այն հակայական զարգացարական-
քաղաքական ներգործման, վորն ունեցավ բանվոր դա-
սակարգի և աշխատավորական մասսաների վրա սոցիա-
լիստական շինարարութեան պրոցեսն իր ամբողջ բար-
դուութեամբ և բաղադրականութեամբ: Կոմսոմոլի ազ-
աճումը վկայում է բանվոր յերկրասարգութեան ղե-
ռակարդային ինքնագիտակցութեան աճման մասին, նրա
մարտական վճռականութեան, ատույցութեան և մեր

հեռանկարների նկատմամբ նրա վստահութեան աճման
մասին:

3 միլիոնի հոսանքը նշանակալից չափով ընդլայնում
է բանվորական և կոլտնտեսական յերկտեսարդութեան
լայն մասսաների վրա կոմսոմոլի ազդեցութեան լծակնե-
րը, ուժեղացնում է վրոնիսկի փոխերը կուսակցու-
թիւնից բանվորներին և լայն աշխատավորական մաս-
սաներին, այնքի յե բարձրացնում կոմսոմոլի դերն ու
տեսակարար կշիռը սոցիալիստական խնդիրների լուծ-
ման համար մղվող պայքարում:

Սակայն, ամենալինասակար ինքնախաբէյութիւն
կլինի հաշիւը հաճեւ այն դժվարին և բարդ խնդիրները,
վորոնք կապված են համեմատաբար կարճ ժամանակա-
շրջանում կատարված այդքան զգալի աճման հետ: «Հա-
շիւութիւններից զլիսապտուշ» կլինի կոմյերիտմիու-
թեան քանակական աճման հետագա ուժեղացումը: Իսկ
այդ մեղքը թաղցնել չի կարելի-կոմսոմոլի առանձին աշ-
խատակիցներին մոտ, նույնիսկ առանձին կադմակերպու-
թիւնների աշխատանքներում նկատվել են այդպիսի
տրամադրութիւններ և համարյա մինչև որս ել դեռևս
դոյութիւնն ունեն: Ծայր ատիճան վտանգավոր կլինի,
յեթե մենք աչքներս փակել յինք այս տրամադրութիւննե-
րի հանդեպ և բայշէիկյան ամբողջ վճռականութեամբ
չհարվածելինք նրանց:

Բայշէիկով արմատական տրադիցիաներից մեկն
այն է, վոր նա միշտ յեղել է և մնալու յե ինքնահոսի
վրա հոյս ղեկու անհաշտ հակառակորդ, հեղափոխա-
կան պրոցեսն ակտիվորեն կադմակերպելու վճռական
կենսագործողը:

Աճման հարցերում նույնպես մենք, բայշէիկներս,
դեմ ենք ինքնահոսին, մեր շարքերի լրացման կադմա-
կերպչական ձեւավորման ու ամրացման համար: Կոմյե-
րիտմիութեան ծառայութիւնը նրանումն է, վոր նա 3
միլիոնանոց լրացման միջոցով կարողացավ կադմա-
կերպչորեն ձեւավորվել այն ձգտումը ղեպի կուսակցու-

թյուն, վորն անընդհատ աճում է բանվոր դասակարգի ամենալայն մասսաների մեջ, սոցիալիզմի համար մղվող պայքարում կուսակցութեան դերի և մասսաների հանդեպ՝ նրա դեկալարութեան պատմական ստուգման հիման վրա:

Սակայն, դրա հետ միասին, մենք, բայելեիկներս, ամենավճռական հակառակորդներն ենք սոսկ թիվերի հետեից ընկնելուն, զուտ քանակական աճումը հետապնդելուն: Մենք կոդմնակից ենք, վոր մեր շարքերը սխտեմատիկաբար ներգրավվեն պրոլետարների և աշխատավարձերի այն կադրերը, վորոնք մեզ մոտ են գալիս պայքարի պրոցեսում, վորոնք ստուգված են պայքարում: Այդպես է աճել մեր կուսակցութեանն աշխատանքի ընդհատակյա ջրջանում, այդպես է աճել և աճում է նա քաղաքացիական պատերազմի և սոցիալիստական շինարարութեան տարիներին, անընդհատ մաքրելով իրեն պատահական, խորթ և կարեւրիստական այն բոլոր տարրերից, վորոնք փարում են նրան, վորպես աշխարհիս մեծագույն պետութեան դուռը կանգնած կուսակցութեան: Հատկապես այդ հիմնական պայմանն է—նոր կադրեր ներգրավել պայքարում, մարտում—վոր հնարավորութեան է տալիս մեզ, ներգրավել կուսակցության և կոմյունիստիկության մեջ բանվոր դասակարգի և աշխատավոր լայն մասսաների լավագույն, ամենատաղավոր, ամենակայուն և անձնվեր տարրերին:

Ներկայումս սոցիալիզմի համար մղվող պայքարը՝ պայքար է աճիի համար, մետաղի համար, յերկաթուղային տրանսպորտի հետ մնալը վերացնելու համար, հացի համար: Իսկ մեր հետամնացութեանը պատմական նվազագույն ժամանակամիջոցում վերացնելու համար մղվող պայքար է, վորովհետեւ՝

«Մենք առաջավոր յերկրներից հետ ենք մնացել 50-100 տարով: Այդ տարածութեանը մենք պետք է անցնենք 10 տարում: Մենք կամ կանենք այդ, կամ մեզ կձգվեն» (Ստալին):

Այդ պայքարի ընթացքն ու դործնական արդյունքը

ները սոցիալիստական շինարարութեան յուրաքանչյուր տվյալ ճակատամարտում, յուրաքանչյուր տվյալ ձեռնարկութեան, խորհանդեսութեան մեջ, հանձնարում, կոլտնտեսութեան մեջ—ահա այս կամ այն կուսակցական և կոմյունիստական կազմակերպութեանն աշխատանքների վորակի հիմնական չափանիշը:

Այս կամ այն կուսակցական կամ կոմյունիստական բջիջի աճումը միմիայն այն ժամանակ լիարժեք աճում է, յերբ տեղի յե ունենում անխզելիորեն կապված բջիջի աշխատած ձեռնարկության աշխատանքի վորակական ու քանակական ցուցանիշների աճումն հետ: Միմիայն այդպիսի աճումը վկայում է, վոր նոր կադրեր են ներգրավված մարտի ասպարեզը, վոր հատկապես դժվարութեանները հաղթահարելու համար մղված և զրական արդյունքներով պսակված պայքարում մենք կարողացանք ներգրավել մեր շարքերը բանվոր դասակարգի և կոլտնտեսականների ամենաառաջավոր այն տարրերին, վորոնք պայքարով համոզվել են, վոր մեր կուսակցութեան և կոմյունիստիկութեան շարքերում ավելի մեծ հնարավորութեաններ կան կազմակերպված ձևով ազդելու սոցիալիստական շինարարութեան ընթացքի ու տեմպի վրա: Առանց դրան աճումը կլինի միմիայն անվանական, սոսկ թիվ հաշիվաթղթի մեջ, սակայն վոչ բանվորական ու կոլտնտեսական մասսաների նոր, առաջավոր, անձնվեր դեկալարների ու կազմակերպիչների իրական առկայութեանը: Այն աճումը, վոր չի հիմնված սոցիալիստական խնդիրները լուծելու համար մղվող պայքարի վրա, չի կարելի համարել իսկական բայելեիկյան աճում:

Ի՞նչ արժեք կունենար այս կամ այն ձեռնարկության բջիջի աճումը, յեթե դրա հետ միասին այդ ձեռնարկութեան աշխատանքի քանակական ու վորակական ցուցանիշների կորագիծը ցած թեքվեր: Իրական ի՞նչ նշանակութեան կունենար կոլտնտեսական այս կամ այն բջիջի աճումը, յեթե միաժամանակ տեղի չունենար այդ կոլտնտեսութեան կազմակերպչական ու տնտեսական ստրագիան, յեթե բջիջի աճմանը գուղակցված չլիներ

այդ կոտնտեսութեան ամբիւրձման մասնակցութեան ընդհանուր պետական խնդիրներէ լուծմանը: Պարզ է, վերայիսի աճումը կհանդիսանաւ սոսկ թվերի հետեւի ընկնելու արտահայտութիւնն և ուրիշ վոչինչ:

Բայց լեկկներն իրենց շարքերի ընդարձակման հարցին միշտ մոտեցել են և մոտենում են կուսակցական ազդեցութեանը բանվորական և աշխատավոր լայն մասերի վրա անընդհատ ուժեղացնելու տեսակետից, առցիակի՞մի համար մղվող պայքարում նրանց ղեկավարումն ամբողջական տեսակետից: Մեզ պետք է քանակական այնպիսի անում, վարին չի ուղեկցում բայց լեկկնայն աշխատանքի վորակի բարձրացումը:

Ահա թե ինչու Կոմյերիտմիութեան շարքերում աշխատողներէջ վրմանց արամադրութիւնները այսուհետեւ է՛լ ամբիւրձարկ տալ քանակական աճմանը, հանդիսանում են նվազագույն դիմադրութեան դիմ, ցուցադրական աճման դիմ: Այդպիսի ընկերներ, չդիտես ինչու, իրենց հարց չեն տալիս, թե աճո՞ւմ է արդե՞ր կոմյերիտականներէ ընդդրկումը քաղուածամբ այն տեմպով, ինչպէս նոր անդամներէ հոսանքը դեպի կաղմակերպութիւնը, բարձրանո՞ւմ է արդե՞ր այդ աճմանը կատարելապէս համապատասխան քաղուածման վորակը, անհրաժեշտ չափով ծավալի՞մ է արդե՞ր կոմյերիտմիութեան աշխատանքը բանվորական և կոտնտեսական յերիտասարդութեան լայն մասսայում: Այլերդ չէ այդ հարցերը տալ իրեն: Չե՞ր վոր առայժմ դեռ չենք կարող դրական պատասխան տալ այդ հիմնական հարցերին: Չե՞ր վոր դեռ լայ՛կ դիտե՞ք, վոր այդ բնադավառում մենք դեռ հետեւնք միւսում, և բաժանաչափ հետ: Քանակական անման հետագա ուժեղացումը, առանց նրա անհրաժեշտ վորակական ամբարցումը, կարող է ջնջել սահմանները Կոմյերիտմիութեան և մյուս բանվոր ու կոտնտեսական յերիտասարդութեան միջիմ, ցածրացնել նրա գաղափարական քաղաքական մակարդակը: Կարե՞ք չկա ապացուցելու, վոր դա բայց լեկկայն դիմ չէ, վոր նա վոչ թէ ուժեղացնում, այլ թուլացնում է

Կոմյերիտմիութեան ազդեցութիւնը բանվորական և աշխատավոր յերիտասարդութեան լայն շարքերում:

Սակայն մի՞թէ դա նշանակում է, վոր մենք միաժամանակ պետք է փակենք Կոմյերիտմիութեան դռները բանվորական և կոտնտեսական յերիտասարդութեան լավագույն, առաջավոր տարրերի առջև: Իհարկէ, վո՛չ: Խնդիրն այդպէս կարող է հասկանալ միմիայն նա, ով չի հասկանում հերթական ողակի վերաբերյալ հարցի լենինյան դրվածքը: Կոմյերիտմիութեան աշխատանքի հենց հերթական ողակին է վերաբերում այժմ խոսքը:

Վո՞րն է ներկայումս Կոմյերիտմիութեան աշխատանքի հերթական ողակը: Ս՛յն, վոր առաջիկայում ևս ուժեղացնենք նոր անդամներէ հոսանքը դեպի մեր շարքերը, թե՛ այն, վոր ամբարցնենք յերեք միլիոնից բազկացած նոր լրացումը: Մենք պատասխանում ենք՝ հենց վերջինն է—այդ լրացման ամբարցումը:

Սակայն ի՞նչ է նշանակում ամբարցնել յերեք միլիոն հոգուց բազկացած այդ աճումը: Դա նշանակում է անցկացնել նրան կոմյերիտական բովից, դաստիարակել նրան բայց լեկկի հերթական տրադիցիաների վագով, բարձրացնել նրա գաղափարական-քաղաքական և տեսական մակարդակը, դաստիարակել նրան ԽՍՀՄ-ի պրոլետարիատի առջև ծառացած ինտերնացիոնալ խնդիրների ըմբռնման վագով, ներգրավել նրան Կոմյերիտմիութեան ամենորայն աշխատանքին, դաստիարակել նրա մեջ կայունութեան և նախաձեռնութեան՝ սոցիալիստական խնդիրները լուծելու համար մղվող պայքարում: Կարճ ասած՝ դա նշանակում է դարձնել այդ նոր կոմյերիտականին բանվորական և կոտնտեսական յերիտասարդութեան այնպիսի մի առաջնորդ, վորը կանգնած լինի տվյալ ետպում ԽՍՀՄ-ի պրոլետարիատի առջև, համայն աշխարհի պրոլետարիատի առջև դրված մեծագույն և ամենաբարդ խնդիրների մակարդակի վրա: Հենց այդ է ներկայումս հերթական ողակը: Իսկ դա նշանակում է, վոր տվյալ ետպում Կոմյերիտմիութեան առջև կանգնած են մի շարք նոր, ամենաբարդ խնդիրներ և

դաստիարակչական ասպարիզում, և՛ կաղձակերպչական ասպարիզում, և՛ կոմյերիտական ակտիվի կադրերի ընտրութեան ու ընդարձակման ասպարիզում:

Ընդամենն վոչ մի բնական չպետք է մոռանալ, վոր միլիոնավոր նոր կոմյերիտականները մեծ մասամբ հարվածաշիններ են, արդժիքնալի, կուլեկտիվացման ակտիվ մարտիկներ, աշխնքն՝ աշխատի մարդիկ, վորոնք անցել են սոցիալիստական շինարարութեան նախապատրաստական վորոշ դպրոց: Նրանք կոմյերիտութեան են մտել նրա համար, վոր ե՛լ ավելի ուժեղացնեն սոցիալիստական վերակառուցման ընթացքի վրա կատարվող ներգործման ակտիվութեանը: Նրանք հարաճուն պահանջներ են ներկայացնում և՛ տեսութեանը տիրապետելու տեսակետից՝ և՛ կուլտուրայի նկատմամբ, և՛ իրենց ստեղծագործական ուժերի ամենաառաջիկայում արդյունավետ ոգտագործման բնագավառում: Յեւ մենք պետք է բախարարենք, մենք պարտավոր ենք բախարարել այդ պահանջները: Յեւ բախարարել աշխտի, վոր այդ նոր կոմյերիտական խմբի ղեկ, թե ինչ տարբերութեան կա իր, աշխտի ասած, նախակոմյերիտական մակարդակի և կոմյերիտութեան շարքերում սոցիալիզմի համար մղվող պայքարի միջև, վոր նա իսկույն զգա իրեն պրոլետարական գործի հայտարարվող ակտիվ բարձր ատրիբուտում:

2. ԿՈՄՅԵՐԻՏԱՌԻՏԻՅԱՆ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵՆԻՆՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդպես ուրեմն, ներկայումս կոմյերիտութեան կենտրոնական խնդիրն է՝ ծավալել դաստիարակչական աշխատանք և առավելագույն չափով ընդգրկել այդ աշխատանքով թե՛ նոր աճումը և թե՛ կոմյերիտական մնացած ամբողջ մասսային: Խոսքը վերաբերում է վոչ միայն քաղաքացիական ծավալմանը, այլև դաստիարակչական աշխատանքին՝ բառիս լայն հասկացողութեամբ:

Անվիճելիորեն բայլչեկյան դաստիարակութեան լավագույն դպրոցն է սոցիալիստական շինարարութեան պրոցեսը և ակտիվ մասնակցութեան այդ պրոցեսին: Սոցիալիստական շինարարութեան այդ պրոցեսը, տալով պայքարի փորձառութեան և դաստիարակելով նոր, կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, ունի դաստիարակչական վերթարի նշանակութեան, վորովհետեւ բայլչեկը նախ և առաջ ակտիվ մարտիկ է կոմունիստական հասարակութեան համար:

Այդ մտքով կոմյերիտութեան ղեկավորներն առաջ է դնացել: Նա սոցիալիստական շինարարութեան իր ցույց տված մասնակցութեամբ դաստիարակել և փորձի չէ հանել միլիոնավոր յերիտասարդ մարտիկներ: Սակայն, յեթե կոմյերիտականների գործնական կաղձակերպչական շրջահայացը ղեկավորեն ընդարձակվել և, ապա տեսական դիտելիքների ասպարիզում նրանք ղեկ լընրեն հետ են մնում: Ահա թե ինչու անհրաժեշտ է առանձնապես ծանրանալ այդ բնագավառի վրա, վորովհետեւ բայլչեկի սոսի շարքային մարտիկ չէ: Բայլչեկի սոցիալիզմի համար մղվող պայքարի ակտիվ մասնակցին ու մասսաների ղեկավարն է: Իսկ մասսաների ղեկավարը զաղափարականորեն և տեսականորեն պետք է ավելի բարձր կանգնած լինի իր ղեկավարած մասսայից: Նա միշտ իր առջև պետք է տեսնի հեղափոխական հեռանկարը, նա սոցիալիստական պրոցեսի առանձին, ջոկ, իր տեսողութեան շրջանակին ընկնող փաստերը պետք է կարողանա դնահատել այդ հեղափոխական հեռանկարի տեսակետից. նա պետք է կարողանա իր ամենորոյա աշխատանքի ամեն մի քայլը համաչափ դարձնել պրոլետարիատի հեղափոխական պայքարի ամբողջ ընթացքին, նրա բնահանուր-դասակարգային, ընդհանուր-պետական խնդիրներին և շահերին:

Առանց այդ հիմնական հատկութեան ունենալու հնարավոր չէ ղեկավարել մասսաներին, առանց դրան չի վերացվի նեղ գործառնութեան ուղին ղեկավարելու վտան-

դը, այն ուղին, վորտեղ ծագած հարցերը հնահատում
և լուծում են իրենց ձեռնարկութեան ներք շրջանակից,
սոցիալիստական շինարարութեան սոսկ տվյալ մեկու-
սացած վանդակիկի ժամանակավոր շահերի տեսակե-
տից: Իսկ հարցերին այդպես մոտենալը, վորքան ել սու-
բեկտիվորեն բարի ցանկութեաններ ունենանք, բացի
վնասից, վորնչն էլ կարող տալ պրոլետարական գոր-
ծին:

Մենք ունեցել ենք առանձին փաստեր, յերբ հեղա-
փոխական հեռանկար չունենալու պատճառով, իր գոր-
ծունեությունը ընդհանուր պրոլետարական խնդիրնե-
րի ու շահերի տեսակետից պնդատել չկարողանալու
չնորհիվ, առանձին ընկերներ գլորվել են սպորտու-
նիստական դիրքերը, վորովհետև, ինչպես բաղմիցս
բնորոշել է Լինինը, հատկապես ոպորտունիզմի համար
բնորոշ է՝ «գոհարները կուսակցության տեական ու
եյական շահերը նրա բոլորեյական, անցողիկ, յերկ-
րորդական շահերին»:

Կոմյերիտմիության նոր աճումից իսկական բայ-
շեկներ կերտելու խնդիրը, այդ՝ յերիտասարդ սերուն-
դի դադախարական տեսական մակարդակը զգալիորեն
բարձրացնելու խնդիրն է, վորովհետև՝

«Աշխատել խարխախելով, աշխատել խավարի
մեջ—այս է գործնական աշխատողների ճակատագրե-
րը, յեթե նրանք չեն ուսումնասիրում լենինիզմը,
յեթե նրանք չեն ձգտում տիրապետել լենինիզմին,
յեթե նրանք չեն ցանկանում իրենց գործնական աշ-
խատանքը շարկապել տեսական անհրաժեշտ պատ-
րաստության հետ», վորովհետև հատկապես տե-
սությունն է, վոր «պրակտիկներին տալիս է կողմ-
նորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վստա-
հություն աշխատանքում, հավատք դեպի մեր գոր-
ծի հաղթանակը: Այդ բոլորը հսկայական նշանա-
կություն ունի և չի կարող չունենալ մեր սոցիա-
լիստական շինարարության ստպարիկում» (Ստա-
լին):

Կոմյերիտմիության այդ տեսական ուսումը բնավ

չպետք է կտրված լինի կոմյերիտականների գործնական
աշխատանքից: Ընդհակառակն՝ Կոմյերիտմիության տե-
սական աշխատանքը պետք է ամենասերտ կերպով կապ-
ված լինի այդ հեղափոխական պրակտիկայի հետ, յե-
նեւով այդ պրակտիկայից, հասցնելով այդ պրակտիկա-
յի առանձին փաստերի ու յերեւոյթների պրոպագանդն
ու բացատրությունը տեսական դիտակցության և ընդ-
հանրացման ավելի բարձր ստորձանի:

Մենք այդ հարցում ես ինչպես և մյուս բոլոր բնա-
դավաններում, պետք է սովորենք Վլադիմիր Իլյինից,
վոր, յեննելով պրոլետարիատի պայքարի առանձին
կոնկրետ փաստից, կարողանում էր բացատրել մասնա-
ներին սկզբունքային տեսական կարեւորագույն պրոբլեմ-
ները: Վերհիշեցեք թեկուզ այն, թե ինչպիսի ամենա-
հարուստ հետեություններ է արել Իլյինը մեր պրոլե-
տարիատի շարքերում աշխատանքի հանդեպ կոմունիս-
տական վերաբերմունք հասունանալու մասին, հիմնվե-
լով ըստ յերեւոյթին այնպիսի գործնական փաստի վրա,
ինչպես 100 կոմունիստի անցկացրած չարաթորյակը Ա-
լեքսանդրյան յերկաթուղում:

Կոմյերիտմիության տեսական ուսման մեջ հիմնակա-
նը պետք է հանդիսանա բայշեկիկյան կուսակցության
պատմության ուսումնասիրությունը: Բայշեկիկյան կու-
սակցության պատմութեանը վաչ քե արխիվ է, այլ
գործողութեան ձեռնարկ, վոր բանալի յե տալիս մեր
ձեռքը՝ ըմբռնելու և լուծելու ԽՍՀՄ-ի ագիտիստա-
կան շինարարութեան և համաշխարհային պայքարի ա-
մենահրատապ պրոբլեմները: Որինակ՝ վերցնենք թեկուզ
բայշեկիզմի պայքարը բանվորական շարժման մեջ իբրե-
թե գոյություն ունեցող տարերայնության տրեյդունիո-
նիստական «տեսություն» դեմ: Մի՞թե այդ պայքարն
անմիջական կապ չունի բայշեկիզմի ներկա մարտերի
պրոբլեմների ու խնդիրների հետ: Մի՞թե տարերայնու-
թեան հակամարդսիստական ոպորտունիստական «տե-
սություն» դեմ՝ բայշեկիզմի մղած այդ պայքարի պրո-
պագանդն ու պարզաբանումը խոշորագույն դեր չպետք

Սահայն Կենտկոմի և կուսակցութեան առաջնորդ
ընկ. Ստալինի բայլչեիկյան արատեստութեան ուժը հենց
այն է, վոր արող կիստական մակամենդները այդ ամե-
նայն խնամքով դիմակալորված յեղույթները հրապա-
րակ հանդիսին և մերկացվիցին: Ընկ. Ստալինը բայլ-
չեիկյան ամենայն անհատութեամբ դրեց ներսած
լիբերալիզմի դեմ՝ առանց անձնավորութեանները նկա-
տի ունենալու՝ պայքարելու հարցը, լենինիզմն ու կու-
սակցութեան բայլչեիկյան պատմութեանը խեղաթյու-
րելու հանդեպ ցուցաբերվող հաշմողականութեան հար-
ցը: Յեա չեմ խոսի ընկ. Յարոսլավսկու խմբագրութեամբ
լույս տեսած «Համկոմկուսի պատմութեանը» գրքի օր-
խախտի մասին, վորոնց մասին արդեն բավականաչափ
մանրամասնորեն գրվել է «Պրավդայում»:

Մեր կուսակցութեան պատմութեան մեջ չկան այն-
պիսի եղբ, վորոնք կարողանային խախտել նրա համ-
դեպ ցուցաբերվող վստահութեանը և բուլացնել նրա
հեղինակությունն ամբողջ աշխարհի պրոլետարիների ու
աշխատավորների մեջ: Մենք գիտեմք և ապահովեմք
այդ պատմութեան մշակումն իսկական բայլչեիկ պատ-
մագետների միջոցով, վորոնք գիտեն պրոլետարական
հեղափոխականների ամբողջ կրակով պայքար մղել
լենինիզմի համար, կուսակցութեան համար, նրա հե-
րոսական պատմութեան համար: Մենք գիտեմք և ապա-
հովեմք այդ պատմութեան խնամքն ուսումնասիրու-
թյունը, դարձնելով վերջինս յեղակետ կուսակցութեան
և կոմյերիտմութեան շարքերի մարքսիստական լենին-
կյան դաստիարակութեան գործում:

Կոմյերիտմութեան կադրերի բայլչեիկյան դաս-
տիարակութեան խնդիրը պահանջում է դաստիարակել
նրանց թե տեսական և թե գործնական ուղորտու-
նիզմի դեմ անհատ պայքար մղելու վոգով: Մեր խնդի-
րըն է զինել այդ կադրերը յերկու Ֆրոնտում՝ պայքարե-
լու հարցի բայլչեիկյան ըմբռամբ, յուրաքանչյուր
տվյալ պատմական ետապում արտահայտված ուղոր-
տունիզմի առանձնահատկութեաններն ըմբռնելու հըմ-

տութեամբ, ինչ դիմակի տակ ել հանդես դա այդ ու-
ղորտունիզմի:

Այժմ ալ և «ձախ» ուղորտունիզմն անդոր է բացար-
ձակ կերպով հարձակվելու կուսակցութեան հիմնական
դժի վրա, վոր ստուգված է սոցիալիզմի կառուցման
համար մղվող մարտերում: Նա արտացոլում է իրեն
ծնող և պրոլետարիատին թշնամի դասակարգերի ան-
դորութեանը: Կուլակն ու վնասարարը ջախջախված են:
Սոցիալիստական հատվածի ձեռքում կենտրոնացած են
մեր ժողովրդական տնտեսութեան տնտեսական բոլոր
լծակները, կոլեկտիվացումն ընդգրկել է չքավոր և
միջակ տնտեսութեանների 60 տոկոսը, սակայն հատակն
ընկղմող թշնամին դիմադրում է, դասակարգային
պայքարը, թեպետ նոր ձևերով, սակայն շարունակվում
է: Դա արտահայտվում է կուսակցութեան դեմ պայքար
մղելու նոր փորձերով, վոր տնում են «ձախ» և ալ ու-
ղորտունիստները: Սակայն այդ յերկչոտ փորձերն ան-
դոր են, վորովհետև կուսակցութեան արագորեն հաս-
կանում է այդ և բայլչեիկյան մերկացումն ու ջախջա-
խում է:

Տվյալ ետապի իրադրութեան առանձնահատկու-
թյունն այն է, վոր այժմ կուսակցութեանը վերակա-
ռուցում է սոց. շինարարութեան աշխատանքի մեթոդ-
ներն ու դեկալարութեանը նոր պայմաների և նոր խնդ-
րերի համաձայն, իսկ մենք անցյալ ետապների փոր-
ձով գիտենք, վոր վերակառուցումների պահին ուղոր-
տունիստական տարրերի դիմադրութեանն անխուսափ-
լիորեն ալելանում է:

Վերցնենք կուլտուրական շինարարութեան ընտա-
վառը: Դեռ շատ ժամանակ չէ, վոր Կենտկոմի մերկաց-
րեց և ջախջախեց «դպրոցի մահացման» «ձախ» տեսու-
թյունները: Քարոզելով իրեն թե կոմունիստական հա-
յացքներ դպրոցի վերաբերմամբ, պատվաստելով անհի-
մըն նախազգամոլութեան (հոգակալոր «նախազգմորի
մեթոդը», վոր անընտրադորեն փոխառված է բուր-
ժուական մանկավարժներից), «ձախերն» իրապես կադ-

մալուծում ելին մտցնում յերեսասարգության ուսման մեջ և դանդաղեցնում ելին դիտական աուարկաների անհրաժեշտ չափով տիրապետումը, առանց վարի, ինչպես ասել է Լենինը, հնարավոր չէ կոմունիզմ կառուցել:

Ապա վերցնենք «Սայուզսախարի» սխտեմի վերջին պրակտիկան, մի կազմակերպություն, վորտեղ, ինչպես ձեզ հայտնի յե, ուղղակի կուլակային դիմադրություն են ցույց տվել հացամթերումների կիրառմանը և ինքնազուլս բազմիցս նվազեցրել են շաքարի արտադրության այն պլանները, վորոնք սահմանված են յեղել կենտրոնական որդանների կողմից, մի կազմակերպություն, վորտեղ գործադրվել է ինքնամատակարարման լայն տարածված սխտեմը և տնտեսավարման բայլչեիլյան սկզբունքների հետ անհամադրելի մի շարք այլ ուղեբացիաներ: Այդտեղ գոյություն է ունեցել ուղորտունիլդի ամենադարձուն, ամենամեղակապարանոց արտահայտությունը, վորով մի շարք աշխատողներ լիովին կորցրել են պատասխանատվության զգացմունքը, բանվոր դասակարգի ու նրա կուսակցության առջև, վորով առաջացել է բուրժուական ալյասերում:

Վերցնենք վերջապես կոլտնտեսական շինարարությունը: Չնայած Կենտրոնական Կոմիտեյի մի շարք ցուցումներին, վոր այժմ հիմնական ողակն է հանդիսանում կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը, մինչև այժմ ել չափողանցումների դեպքեր են լինում կոլտնտեսությունները նոր անդամներ ներգրավելու գործում, քիչ չեն «ձախ» վարչարարության փաստեր, սոսկ թվերի հետեից ընկներ փաստեր, թվեր, վորոնք չեն ամրացված կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ածամը և ամրապնդմամբ: Դրա հետ միասին մի շարք դեպքերում ուղորտունիստաբար հավանություն են տալիս կոլտնտեսականների դեռևս չվերացված մանր-բուրժուական տենդենցներին, անտարբեր են վերաբերվում, յերբ ա-

ռանձին կոլտնտեսություններ անտեսում են պետություն առջև իրենց ստանձնած պարտավորությունները, և նույնիսկ առանձին կոմունիստներ խրախուսում են մի քանի կոլտնտեսություններին, յերբ նրանք հանցագործ կերպով կիրառում են կուսակցության և կառավարության մղած կարեվորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաներին դիմադրելու կուլակային մեթոդներ:

Մարքսիստ ագրարագետները համագումարում ընկ. Ստալինն առանձնապես ընդգծել էր.

«...Սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսությունների անդամներն արդեն դարձել են սոցիալիստներ: Վոչ, դեռևս շատ պետք է աշխատել, վորպեսզի կարողանանք գյուղացուն դարձնել կոլտնտեսական, ուղղել նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունը և դարձնել նրան սոցիալիստական հասարակության իսկական աշխատավոր» (ՍՍՍՀԻՆ):

Վրմանը մոռացել են այս խնդիրը, չհասկանալով, վոր տվյալ ետապում կոլտնտեսականի մասնավոր սեփականատիրական խթանները կտրատված են, սակայն վերջնականապես արմատահան չեն արված: Տեղերից, չրջաններից ստացված մի շարք փաստեր ցույց են տալիս, վոր հաճախ յերեկվա մանր սեփականատիրոջ դատտիարակելու և նրան սոցիալիստական հասարակություն իսկական աշխատավոր դարձնելու համար մղվող բայլչեիլյան պայքարը փոխարինվում է կոլտնտեսականին նրա այսորվա «հողու» բոլոր թերությունների և տատանումների հետ մասին իրեալականացնելու՝ բայլչեիլդի վողուն խորթ ջանքերով:

Պարզ է, վոր այդ մոտեցումը կոլտնտեսական շարժմանը հանդիսանում է ուղորտունիլդի արտահայտությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման պրակտիկայում: Նույնպես պարզ է, վոր կոլտնտեսական շինարարության մեջ գոյություն ունեցող «ձախ» դիրքավորումները չեղելով մեր ուշադրությունը հիմնական խնդրից, կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրացման և այդ հիման վրա

կուտնտեսական ավելի մեծ հոսանքի կազմակերպման խնդրից, միայն ջուր են ածում նրանց ջրաղացին, ուլքեր խրախուսում են կուտնտեսականի դեռևս չվերացված մանր բուրժուական, մասնավոր սեփականատերական տենդենցները, նրանց ջրաղացին, վորոնք խրախուսում և վոչ թե հաղթահարում են այդ տենդենցները:

Ահա թե ինչու, յերբ մենք խոսում ենք Կոմյերիտմիության նոր կադրերի մարքսիստական շենինյան դաստիարակության բացակայության մասին, նախ և առաջ նկատի ունենք նրանց դաստիարակումն այնպիսի վոդով, վոր տողորված է բայլչեիկյան անհաշուությամբ սոցիալիզմի համար մղվող տեսական ու գործնական պայքարում ցուցաբերվող ուղորտունիղմի հանդեպ: Այդ խնդրին պետք է յենթարկվի Կոմյերիտմիության դաստիարակչական աշխատանքի ամբողջ սխտեմը՝ թաղուսդրոցը և կոմյերիտական ժողովը, կուսակցության պատմությունը և արդֆինպլանի կատարման հարցերը, հանդիպական պլանի կամ դարնանացանի նախապատրաստման ընթացքի ջնարկումը և տեսական տնտեսագիտության պրոբլեմները: Գրա հետ միասին կոմյերիտականները պետք է զբաղվեն նաև այնպիսի գործերով, ինչպիսիք են՝ սոցիալիստական դյուղատնտեսության վերակառուցման փորձի տեսական ընդհանրացումը, գեղարվեստական գրականության ջնադատական վերլուծումը և այլն: Այդ բոլորը պետք է Կոմիտի յենթարկված լինի հիմնական խնդրին՝ Կոմյերիտմիության նոր կադրերից կայուն, քաղաքական փոփոխ հանդեպ անհաշտ բայլչեիկյան դաստիարակչության խնդրին:

Ընդամին անհրաժեշտ է չարունակ հիշել, վոր Կոմյերիտմիության աճումը, նրա դերի ու տեսակարար կշռի ավելացումը սոցիալիստական շինարարության պրոցեսում, նշանակում է, վոր Կոմյերիտմիությունը դարձել է կարևորագույն այն ավազաններից մեկը, վորտեղից կուսակցությունը դեկտվար նոր կադրեր է

թաղում սոցիալիստական շինարարության գաղափարն ճակատամարտերի համար:

Յերբ մենք խոսում ենք Կոմյերիտմիության բայլչեիկյան դաստիարակության մասին, նրա նոր լրացման մեջ կատարվելիք աշխատանքի խնդիրների մասին, մենք չարունակ աչքի առաջ պետք է ունենանք հեղափոխականի այնպիսի տիպ մշակելու խնդիրը, վորի մասին տեսել է ընկ. Ստալինը՝ բնորոշելով աշխատանքի լենինյան վոճի առանձնահատկությունները: Ահա թե ինչ է տեսել ընկ. Ստալինն այդ առթիվ՝

«Լենինիղմ տեսական ու գործնական մի զբաղւոց է, վորը մշակում է կուսակցական ու պետական աշխատողի հատուկ տիպ, վորն ստեղծում է աշխատանքում լենինյան հատուկ վոճ: Վորո՞նք են այդ վոճի բնորոշ գծերը, վորո՞նք են դրա առանձնահատկությունները:

Այդ առանձնահատկությունները յերկուսն են. ա) ուսական հեղափոխության թափ ու ծավալ և բ) ամերիկյան գործնականություն: Լենինիղմի վոճն է՝ միացնել այդ յերկու առանձնահատկությունները կուսակցական և պետական աշխատանքում» (Լենինիղմի հարցեր», հջ 92):

Յերբ խոսքը վերաբերում է բայլչեիկին, մեկը մյուսից անբաժանելի յն: Մեզ հարկավոր չէ «հեղափոխական» թմբկահարի տիպը, և վոչ էլ նեղ գործամոյի տիպը: Մեզ անհրաժեշտ է Կոմյերիտմիության նոր կադրերից մշակել բայլչեիկյան, այսինքն՝ այնպիսի մարդիկ, վորոնք գիտեն կապ տեսնել իրենց հանձնած գործի—վորժան ել փոքր լինի այդ գործը—և պրաքտիկապես ընդհանուր դասակարգային, ընդհանուր պետական խնդիրների միջև, վորոնք կարողանում են կազմակերպել իրենց և կազմակերպել ուրիշներին՝ իրենց հանձնած գործը մինչև վերջ հասցնելու համար, վորոնք կարողանում են կադրահարել իրենց առջև դրված խնդրի իրականացման մանապարհին առաջացած բոլոր խոչընդոտները, վորոնք գիտակցում են պատասխանատվության մեծությունը կազմակերպության

տված ամենափոքր համանադրութեան համար, վարձով կարողանում են կուսակցութեան ղեկավարութեամբ տանել իրենց հետ բանվորական և կոլտնտեսական յե-
րիտասարդութունը, գլխավորել և ղեկավարել նրան, սօցիալիզմի կառուցման արդի խնդիրների կատարման համար մղվող լարված պայքարում:

8. ԿՈՆԿՐԵՏ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Կոմյերխոմիութեան առջև նրա աճման առնչու-
թեամբ դրված խնդիրների խիստ բարդութիւնը սուր
կերպով դնում է յերկրորդ կարեւորագոյն հարցը, այն
մեթոդների և կազմակերպչական ձևերի հարցը, վո-
րոնք պետք է կիրառել Կոմյերխոմիութեանը 5 և կես
միլիոն անդամից բաղկացած իր մասսային ղեկավարե-
լիս: Զեր պրենումի հիմնական խնդիրներից մեկն է
հենց մշակել կոնկրետ ձեռնարկումներ և՛ Կոմյերխո-
միութեան ապարատների կազմակերպչական կառուց-
վածքի ասպարիզում, և՛ կոմյերխական քաղաքացի-
ման սխեման կազմակերպչական կառուցման ասպար-
իզում, և՛ ուժերի դասավորման ու կոմյերխական
ակտիվի ոգտագործման հարցում:

Այդ բոլոր ձեռնարկումների առանցքը պետք է
դառնա ղեկավարութեան կոնկրետութեան և կատար-
ման սխեմանակ ստուգման ապահովումը:

Մեր սոցիալիստական խնդիրների իրականացման
համար մղվող պայքարի գործին բայժեկիկան վերա-
բերմունքի վրդով դատարարակելու համար մղվող
պայքարում կարեւորագոյն գործիք է կատարման ա-
մենորայ ստուգման սխեման: Սխալ է գործն այնպես
պատկերացնել, թէ կատարման ստուգումը բացառա-
պես վերահսկիչ հատուկ որդանների և ժամանակ առ
ժամանակ կատարվող անպատելի այցելութիւնների,
ստուգումների ֆունկցիան և ճակատաթիւնն է:

Հասկանալի չէ, վոր անհրաժեշտ են և՛ հատուկ
վերահսկիչ որդաններ, անհրաժեշտ են և՛ թեթեւ հեծե-

լագորի հետազոտութիւններ և այլն: Սակայն միայն
այդ չէ, վոր պետք է մեղ, միայն այդ չէ խնդրի լու-
ծումը, թեկուզ այն պատճառով, վոր սոցիալիստական
չինարարութեան ներկա թափի պայմաններում, վե-
րըստուգիչ վոչ մի որդան, վորդան էլ լավ հիմքերի
վրա դրված լինի նրա աշխատանքը, չի կարող հետեւ
ամեն բանին: Կատարման ստուգումը մեղ հարկավոր
է վորպես մեր պետութեան յուրաքանչյուր քիչի, յու-
րաքանչյուր առանձին աշխատողի գործունեութեան
սխալներ:

Մեղ անհրաժեշտ է միջոցներ դնել, վոր այս կամ
այն կազմակերպութեանը կամ առանձին աշխատողին
հանձնարարված առաջադրանքի կատարման ընթացքը
ստուգվի սխալեմատիկաբար, մինչև հանձնարարված
խնդրի լիակատար սպառումը և լուծումը: Իսկ այդ
պահանջում է, վոր ստուգում կատարվի և՛ վերեւից,
և՛ ինքնստուգում կատարի յուրաքանչյուր առանձին
կազմակերպութիւն, յուրաքանչյուր առանձին աշ-
խատող:

Հատկապես այդ աստիարիզումն է, վոր առայժմ
մեղ դեռ շատ բան է պակասում: Միջանի կազմակեր-
պութիւններում և հիմնարկներում նշանակել են կա-
տարումն ստուգելու համար հատուկ անձնավորու-
թիւններ կամ հատուկ վերահսկիչ խմբակներ և «կա-
պարով տարով» նրանց կատարման ստուգումը, գտնում
են, վոր դրանով խնդիրն սպառված է: Պարզ է, վոր
այստեղ գոյութիւն ունի կատարման ստուգման
խնդրի բյուրոկրատիկ, և վոչ թէ լինիյան ըմբռնում:
Պարզ է, վոր կատարման ստուգմանն այդպես մոտե-
նալիս, մենք չենք կարող գործը գնել այնպիսի հիմքե-
րի վրա, վոր այդ ստուգումը դառնա բայժեկիկան ղե-
կավարութեան մեթոդ: Պարզ է, վոր կատարման ստու-
գումը վորպես «հիմնակուն» աշխատանքի կցորդ ըմ-
բռնելիս, մենք յերբեք չենք ազատվի բազմաթիւ բո-
նաձեւերից, վորոնք շատ դեպքերում, հենց կատարման

սխառեմատիկ ստուգման բացակայութեան պատճառով չեն լուծուած առաջադրված խնդիրները:

Այն ինչ, ներկայումս կատարման ստուգմանը դեմ է առնում նաև սոցիալիստական շինարարութեան տեմպերն ե՛լ ավելի արագացնելու պրոբլեմը, ե՛լ դերակարգութեան կոնկրետացման խնդիրը, ե՛լ կադրերի բայլչելիկյան դաստիարակման պրոբլեմը: Կատարման ստուգման պրոբլեմը ընտել կազմակերպչական-տեխնիկական պրոբլեմ չէ, այլ մեծագույն սկզբունքային ֆալսեփական պրոբլեմ:

16-րդ կուսամասդումարից հետո անցած ժամանակաշրջանում կուսակցութիւնը տվեց խոր անհրաժեշտ դիրքավորումները և միանգամայն սպառնչկոնկրետ ցուցումներ, սոցիալիստական շինարարութեան զանազան ճակատամասերում կատարվող աշխատանքի վերակառուցման խնդիրների մասին: Այստեղ մենք ունենք ե՛լ Կենտկոմի, Ժողկոմխորհի ու Յնտրոսայուզիի դիմումը խորհրդային առևտրի մասին, ե՛լ մի շարք վորոշումներ արդյունաբերութեան առաջատար ճյուղերում կերամիկիք աշխատավարձի սխառմի մասին, ե՛լ մի շարք վորոշումներ յերկաթուղային տէրանսպորտի աշխատանքի մասին ու այլ վորոշումներ ու դերեկտիվներ: Այստեղ հատուկ նշանակութիւն ունի տնտեսավարների խորհրդակցութեան ընկ. Ստալինի արտասանած ճառը, վոր իր 6 ցուցումներում այդ հարցերը հասցրեց սկզբունքային հսկայական բարձրութեան:

Այժմ մեր խնդիրն է բայլչելիյան տմեկայն համալրչամբ մաքառել այդ ցուցումները և կեցութեմի վորոշումները հետևողականորեն կեցագործելու. համար: Իսկ դա կարելի յե՞ միթե անել առանց կատարման սխառեմատիկ ստուգմանը: Պարզ է, վոր անկարելի յէ:

Վերջենք, սրինակ՝ Կենտկոմի և Ժողկոմխորհի վերջերս ընդունած վորոշումը, վորով կուսակցական

ու դատական պատասխանատվութեան եմ յեթարկված մի շարք արտադրող և առևտրական կազմակերպութեաններ՝ ապրանք կուտակելու և ապրանքն առանց ամանի ուղարկելու համար: Կենտրոնական Կոմիտեն բազմիցս միանգամայն կոնկրետ ցուցումներ է տվել ապրանքի կուտակման դեմ պայքարելու ուղիները մասին, սպառողի սպասարկման վորակի համար սլայքարելու միջոցների մասին և այլն: Սակայն ինչպե՞ս պատահեց, վոր մի քանի ամսվա ընթացքում կատարվում եյին այդպիսի աշխատակութեաններ: Թե՞ դերեկտիվներ չկային: Վոչ, դերեկտիվներ կային, և պարզ ու սպառնչ դերեկտիվներ: Թե՞ կուտակված ապրանքները դնող չկար: Բավական է միայն դնել այդ հարցը և կուտակներ, վոր այդ չէ բանը: Թե՞ աման չկար: Վոչ, պարզվում է, վոր աման ել կար, հենց վոր հուլ տվին, սկսեցին ավելի պահանջկոտ լինել ամանները վերադարձնելու վերաբերմամբ, և ամանի ուսուրաններն իսկույն և յեթ զգալիորեն ավելացան: Ուրեմն ինչո՞ւ մենք բանը: Ինչո՞ւ կարիք յեղավ, վոր միջամտեն Համ Կ(Բ)Կ Կենտկոմը և Ժողկոմխորհը: Բանը միայն այն է, վոր համապատասխան կադրակերպութեաններ չեյին ստուգում այդ դերեկտիվները կատարումը:

Յեմ հենց այն պատճառով, բյուրոկրատիկ, ուրտտունիստական, անպատասխանատու տարբեր հնարավորութիւն ունեյին մի շարք ամիսները ընթացքում կազմալուծում մտցնել բանմատակարարման մեջ:

Պարզ է վոր առանց վորպես աշխատանքի սխառեմ իրականացվող կատարման ստուգման, հնարավոր չէ ապահովել իսկական բայլչելիյան կոնկրետ դորձնական դեկավարութեանը, հնարավոր չէ ժամանակին յերևան բերել և մինչև վերջն ընկճել՝ ուրտտունիստական տարբեր կողմից վերակառուցմանը ցույց տրվող դիմադրութեանը, հնարավոր չէ լիովին մարել զգալի աշխ յենթարկել մեր բոլոր ուսուրանները և ուղտագործել վերջիններս սոցիալիստական շինարարութեան տեմպերն ե՛լ ավելի արագացնելու համար:

Կատարման ստուգումը հսկայական նշանակու-
թյուն ունի բաղլչեիկյան կադրերի դաստիարակելու
համար: Ինչպե՞ս կարելի չե խոսել աշխատողի մեջ
հանձնարարված գործի պատասխանատվության զգաց-
մունք դաստիարակելու մասին, յեթե նրան սխտեմա-
տիկաբար չեն ստուգում: Պարզ ե, վոր այդ պայման-
ներում նրա մեջ դաստիարակվում ե վոչ թե պատաս-
խանատվության զգացմունք, այլ «մի կերպ յոլա գնա-
լու» տրամադրություն: Ինչպե՞ս կարելի չե խոսել աշ-
խատավորի մեջ նախաձեռնություն դաստիարակելու
մասին, յեթե չկա կատարման մշտական ստուգում:
Այդ սխտեմում աշխատողի մեջ մշակվում ե վոչ թե
նախաձեռնություն, այլ ինքնահոսի հոսյուն: Չե՞ վոր
կատարման ստուգման բացակայությունը խրախուսում
ե դանդաղաշարժությունը, անշարժությունը, ստեղծ-
ված գրությունից յեւք փնտրելու համար ինքնուրույն
կերպով գլուխ հոգնեցնելուց խուսափելը, յեւք թողնե-
լով ուղորտունիքի գործնական ամենավատ արտա-
հայտությունների համար: Կատարման ստուգման,
վորպե՞ս սխտեմի, բացակայությունը խանգարում ե
աշխատավորի իսկական հատկությունների արտահայտ-
մանը, դանդաղեցնում ե լավ աշխատողի ընտրու-
թյունն ու խրախուսումը, խանգարում ե դուրս զցելու
ապարատից այն ամենը, ինչ վոր խորթ ե, կարելիա-
տական ե բյուրոկրատիկ:

Մեր կուսակցությունն իր աշխատանքը, մասա-
ների ղեկավարումը ե իր շարքերի դաստիարակումը
միշտ կառուցել ե իր վորոշումների, ցուցումների ու
դիրեկտիվների կատարման սխտեմատիկ ստուգման
վրա: Կարելի չե բերել ընկ. Լենինի բազմաթիվ ցու-
ցումներն այդ խնդրի մասին, նրա «Բանգլուդեստան-
թյան խնդիրների մասին», «Լավ ե քիչ, բայց լավ»
հոդվածներում ե առանձին ընկերներին նրա դրած մի
շարք նամակներում ու գրություններում:

Ներկայումս այդ պրոբլեմը կանգնած ե մեր առաջ
եք ամբողջ հասակով, վորովհետեւ պայմաններն ան-

չադի ավելի բարդ են դարձել, աշխատանքի մասշտաբն
աճել ե վիթխարի չափով ե շարունակում ե աճել: Ա-
հա թե ինչու այդքան սուր կերպով ե դնում այժմ
կատարման ստուգման հարցն ընկ. Ստալինը, համա-
րելով այդ բաղլչեիկյան ղեկավարության մեթոդները
այն վերակառուցման կարևորագույն տարրը, վորի
համար պայքար ե մղում ներկայումս կուսակցու-
թյունը:

Կոմյերիտմիություն ղերը չավազանց մեծ ե այդ
խնդրի լուծման ասպարիզում: Նա պետք ե ոգնի կու-
սակցությունը կատարման ստուգման գրվածքի համար
նրա մղած պայքարում: Նա հսկայական հնարավորու-
թյուններ ունի դրա համար: Այստեղ մենք ունենք ե
թեթե հեծեբաղորի, ե՞ շեֆությունն առանձին հիմ-
նարկների նկատմամբ, ե՞ մի շարք այլ ձևեր: Սա-
կայն դրա համար անհրաժեշտ ե, վոր իրեն՝ Կոմյե-
րիտմիություն աշխատանքում կատարման ստուգումը
պատշաճ տեղ գրավի: Կարելի չկա ապացուցելու, թե
ինչպիսի հսկայական նշանակություն ունի փաստորեն
կատարված ստուգումը կոմյերիտական նոր կադրերին
Կոմյերիտմիություն ամենուրեւ աշխատանքին հաղոր-
դակից դարձնելու համար, այդ կադրերին բաղլչեի-
կյան կարգապահության ե հանձնարարված գործի
պատասխանատվության վորով ղաստիարակելու հա-
մար:

Ինչպե՞ս ե գրված ուրեմն կատարման ստուգումը
Կոմյերիտմիություն մեջ: Պետք ե արձանագրել, վոր
աշխատանքի հենց այդ կարևորագույն բնադավառում
դեռևս չատ բան ե պակասում Կոմյերիտմիությունը:

Վերցնենք այն սխալներն ու շեղումները, վորոնք
տեղի չեն ունեցել մի շարք կոմյերիտական կազմակեր-
պություններում Կոմյերիտմիություն շարքերը նոր
անդամներ ընդունելու ասպարիզում: Չե՞ վոր դուք
աճման մասին վորոշում ընդունելով, յեթե սխտեմա-
տիկաբար ստուգելիք այդ վորոշման կատարումը տե-
ղերում, կարող եյիք խուսափել այդ սխալներից ու

խելագարութեանը, կարող ելիք ուղղել այդ կազմակերպութեաններին սխալներն աշխատանքի ընթացքում, ոգնել նրանց այդ ստուգման տրոցիսում, առանց սպասելու հատուկ նախադրույացումներ և հիշեցումներ կուսակցական Կենտրոնական Կոմիտեից:

Այնուհետեւ, վերջենք, կոմյերիտական «Մալա-դայա դավարդի» հրատարակչութեան աշխատանքի հարցը: Չե՞մ վոր դա իդեոլոգիական ճակատի կարեւորագույն բնագավառն է: Այնինչ, կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն, վերջերս լսելով այդ հրատարակչութեան ղեկուցումը, մի շարք ամենալուրջ իդեոլոգիական ճեղքվածքներ դտավ նրա աշխատանքում: Ինչո՞ւ վ կարելի չե բացատրել այդ ճեղքվածքները: Դարձյալ նույն յերևույթով՝ կատարման մշտական ստուգման բացակայութեամբ: Համ. ԼԿՅՆՍ Կենտկոմը ամլյալ ղեկավարում վատահելով այդ հրատարակչութեան ղեկավարութեանը և հրատարակչութեան կազմակերպչական-տնտեսական և իդեոլոգիական աշխատանքին, սխտեմատիկաբար չեք ստուգում վերջինս, չեք ոգնում անհրաժեշտ չափով այդ ղեկավարութեանը, չեք ուղղում նրա սխալները:

Վերջենք, վերջապես, տարրական և միջնակարգ դպրոցի հարցը: Յես արդեն ասացի, վոր կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն այդ ճակատամասում յերեան բերեց ամենամիասակար «ձախ» տեսութեաններ և դերքաւորութեանը վոչ մի կերպ չի կարող խուսափել կուլտուրական ֆրոնտի այդ կարեւորագույն ճակատամասում կատարվող աշխատանքի պատասխանատվութեանից: Ինչո՞ւ ուրեմն կուսակցութեան դժի այդ բոլոր խելագարութեանները յերեան բերվեցին միմիայն այն ժամանակ, յերբ գործին միջամտեց Համ. Կ(Բ)Կ Կենտկոմը: Դարձյալ այն պատճառով, վոր Կոմյերիտմիութեանը միջոցներ ձեռք չառավ սխտեմատիկ ըստուգման յնթարկելու կուլտուրական շինարարութեան այդ ճակատամասում կուսակցութեան աւլած

կարեւորագույն դիրեկտիւաների կատարումը, իսկ չըստուգելով, պարզ է, վոր Կոմյերիտմիութեանը չեք կարող ժամանակին կոնկրետ ոգնութեան ցույց տալ Լուսիոյ կոմատին, մերկացնելու և հալթահարելու այդ հակահոսանքական դերքաւորութեաները:

Ահա դուք այժմ սլենուում ճենարկում եք Կոմյերիտմիութեան ամման, դատարարական աշխատանքի ծաւալման, ղեկավարութեան մեթոդների ու կազմակերպչական ձևերի վերականգնման մի շարք ամենալուրջ հարցերը: Հասկանալի չե, վոր դուք կընդունեք նաև համապատասխան վորոշում: Սակայն յիշե՛ք դուք դրա հետ միասին չկազմակերպեք կատարման սխտեմատիկ ստուգումը, յիշե՛ք դուք, սկսած Համ. ԼԿՅՆՍ Կենտկոմից մինչև կոմյերիտական ԲՆՎՔ, Կոմյերիտմիութեան ամբողջ աշխատանքը չփոխադրեք կատարման մշտական ստուգման ռելսերի վրա, ապա շատ քիչ արդյունք կատանաք այդ վորոշումներից, վորովհետեւ առանց դրան դուք ի վիճակի չեք լինի ապահովել կոնկրետ, իսկական-բայլանիկյան ղեկավարութեան՝ վերևից մինչև ներքև:

Այնինչ, ղեկավարութեան խնդիրներն այժմ պշալիորեն բարդացել են: Ավելի յես բարդանում ամբողջ յերկրի, հետեւադես նաև Կոմյերիտմիութեան առջև դրված խնդիրները: Կրկնապատկվեց Կոմյերիտմիութեան անդամների մասսան: Յեւ ապա չսկսեք ե մոռանալ, վոր Կոմյերիտմիութեան շարքերը նոր մտնողների գերակշռող մեծամասնութեանը սոցիալիստական շինարարութեան ակտիւ մասնակիցներ են, այսինքն՝ այնպիսի մարդիկ, վորոնք կանգնած են դադարաւական-քաղաքական և կուլտուրական վորոշ մակարդակի վրա:

Ղեկավարութեան խնդիրների բարդանալը պահանջում է ամենավճռական պայքար մղել բուրժուա-տիկ վարչարարութեան բոլոր տենդենցների դեմ, վորոնցից հասկանալի չե, վոր ազատ չեն նաև Կոմյերիտմիութեան ապարատի առանձին ողակները: Նա պա-

հանձնում է լավ հիմքերի վրա դրված ինֆորմացիա ստալ կոմյերիտական ամբողջ մասսային կուսակցության ու Կոմյերիտմիության վերոշումների մասին, վորպեսզի կոմյերիտականներն որ-ամուր իրազեկ լինեն աշխատանքի հերթական խնդիրներին: Նա պահանջում է վոր Կոմյերիտմիության ապարատները և մանավանդ Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմը լավ հիմքերի վրա դրված ինֆորմացիա ունենան Կոմյերիտմիության մեջ և բանվորական ԲՈՒՀ-ական ու կոլտնտեսական յերիտասարդության շարքերում տեղի ունեցող յերևույթների և պրոցեսների մասին: Նա պահանջում է, վոր Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմն իր աշխատանքների մեթոդները վերակառուցի այնպես, վոր ապահովվի իսկական կոնկրետ դեկավարությունը, խորը և շերտավորված ղեկավարություն՝ հիմնված յուրաքանչյուր տվյալ յերկրային կազմակերպության աշխատանքի առանձնահատկությունների ու պայմանների սխտեմատիկ ուսումնասիրման վրա:

Խնդիրների բարդանալը պահանջում է Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմից այնպիսի ղեկավարություն, վորը դարկ տա յերկրային ու մարդային կազմակերպությունների նախաձեռնությանն ու լայն ինքնագործունեյությանը: Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմը պետք է միջոցներ ձեռք առնի, վոր նույնպիսի ղեկավարություն ցույց տան նաև յերկրային կազմակերպությունները քաղաքային, շրջանային կազմակերպությունների և կոմյերիտական առանձին բջիջների նկատմամբ:

Միմիայն այդ դեպքում Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմը կարող է պայքար մղել մակերեսայնության, թեթև վերաբերմունքի դեմ, կարող է անչափ ավելի լավ շոշափել և հայտարարել թե ինչպե՞ս և ի՞նչ վողով և ապրում կոմյերիտական մասսան, նրա առանձին խավերը, նրա առանձին կազմակերպությունները: Միմիայն այդ պայմաններում և՛ Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմը, և՛ Կոմյերիտմիության տեղական կոմիտեները կապահովեն կոմյերիտականների մոբիլիզացիան ժամանակին և

կուղղեն նրանց ստեղծագործական ակտիվությունը դեպի սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների լուծումը:

Բերեմ մի որինակ: Վերցնենք Հյուսիսի կոմյերիտական կազմակերպությունը: Դուք գիտեք, վոր այս տարի դարնանը մենք խոշորագույն ճեղքվածք ունեյինք անտառահատման գծով: Հյուսիսի Կոմյերիտմիությունը մեծագույն հնարավորություններ ուներ ողնելու կուսակցությանն այդ ճեղքվածքը վերացնելու ասպարեղում: Յեւ Նա հետադարձ կարողացավ գործով ապացուցել այդ: Սակայն մինչև վոր կուսակցության Կենտրոնական Կոմիտեն չմիջամտեց, Հյուսիսի կոմյերիտական կազմակերպությունը վտքի չհանվեց, մոբիլիզացիայի չենթարկվեց ճեղքվածքը վերացնելու համար և նրա ակտիվությունը չուղղվեց դեպի սոցիալիստական շինարարության այդ կոնկրետ խնդրի լուծումը:

Վերջին ժամանակվա ընթացքում կուսակցության Կենտրոնական Կոմիտեն բաղմիցս լսել է Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմի ղեկուցումները և՛ աճման մասին, և՛ դատարակաչական աշխատանքի ու ծավալման մասին, և՛ մի շարք այլ հարցերի մասին: Ընդամին Կենտրոնական Կոմիտեն նչեց մի շարք թերություններ և չափազանց երական թերություններ:

Յեւ բնագ չեմ ուզում ասել, վոր Համ. ԼԿՅՆՄ-ի Կենտկոմը վողինչ չի արել իր աշխատանքը վերակառուցելու համար: Սակայն չե՞ վոր և՛ պայմաններն են փոխվել և՛ խնդիրների բարդությունն է ավելացել վիթխարի չափով: Յեւ քանի վոր փոխվում են պայմանները, անհրաժեշտ է ապահովել նաև վերակառուցման համապատասխան տեմպ՝ համաձայն նոր պայմանների: Հակառակ դեպքում չի վերացված հետ մնալու վտանգը:

Սրանք են այն հիմնական խնդիրները, վորոնք կանգնած են Կոմյերիտմիության առջև տվյալ ետապում: Ինչպես տեսնում եք, դրանք չափազանց մեծ և բարդ խնդիրներ են: Միամտություն կլինի յենթադրել, վոր Կոմյերիտմիությունն ի վիճակի յե իր ուժե-

բով լուծել այդ ամենաբարդ դատարարական և կազմակերպական խնդիրները: Առանց կուսակազմակերպությունների կոնկրետ ղեկավարութան, առանց նրանց ամենօրյա ոգևութան, Կոմյերիտմիությունն ինքը միայնակ չի կարող իրականացնել այդ խնդիրները: Ահա թե ինչու Կոմյերիտմիության 3 միլիոնանոց անուր համապատասխան պարտականություններ և դժուր նաև տեղական կուսակազմակերպությունների վրա, պահանջելով նրանցից ուժեղացնել իրենց ուշադրությունը Կոմյերիտմիության նկատմամբ և համապատասխանորեն վերակառուցել նրա ղեկավարման մեթոդները:

Քանակի հետևից չընկնել հետագա անման գործում, առավելագույն ուշադրություն կենտրոնացնել դատարարական աշխատանքի ծավալման վրա: Անցյացնել նոր կադրերին կոմյերիտական բովից: Այդ նոր կադրերից մշակել այնպիսի լեկցիաներ, վորոնք գիևված լինեն կողմնորոշման ուժով, բայշևիկյան անհաշտությամբ դեպի ոպարտունիզմը, վորոնք գուգաչցեն իրենց մեջ գաղափարական քաղաքական բարձր մակարդակը բայշևիկյան գործարարությամբ և նախաձեռնությամբ՝ գործնական խնդիրների լուծման ապրիորով: Վերակառուցել դեկավարության մեթոդները դրա համաձայն՝ վերևից մինչև ներքև: Այս է խրդիրը:

Հիմք չկա տարակուսելու, վոր Կոմյերիտմիությունը ետագայում ևս առաջ գնալով կուսակցության, նրա լեկցիան կենտկոմի և առաջնորդ ընկ. Ստալինի փորձված բայշևիկյան դեկավարությամբ, կիրագործի այդ խնդիրը և կտա յերկրին սոցիալիզմի համար մղվող պայքարում մասնակցություն դեկավարելու հարյուր հազարավոր նոր աշխատողներ:

Հանձնված է հրատարակության 20-1932 թ. Մտ. Ժ. Բ.

Գե. Բ. Կոմ. Զբոս, 2031 Գրավիր 7079 (Բ) Գառ. 279 Խիլատ 10000

<< Ազգային գրադարան



NL0195445



Բ. Ռ. ՍՈՍՆԻՍԵ

**ՅԱ ԲՈԼՏՏԵՎԻՏԿՈՔ ԲՈՍՓԻՏԱՆԻԵ
ՆՈՎՅԱ ԿԱԴՐՈՎ ԿՈՄՏՈՄՈԼԱ**

ԴՈՍԻԱԴԱՏ ՏՏՐ ԱՐՄԵՆԻԻ
ԵՐԵՎԱՆ - 1991